ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/21, 18.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Էջմիածին բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, քիմիական նյութերի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխելու «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7

2) Պատվիրատուի անվանումը՝ <<Էջմիածին
Բժշկական Կենտրոն >> ՓԲԸ
Հասցե՝ ք. Էջմիածին, Բաղրամյան 26

3)Էլեկտրոնային աճուրդի ծածկագիրը՝ « ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03»
և առարկան՝ <<Քիմիական նյութերի ձեռքբերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Էջմիածին Բժշկական Կենտրոն >>ՓԲԸ -ն << Քիմիական նյութերի >> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել՝ «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. փետրվարի 11-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի հրավերի <<Չափաբաժնի անվանումը>> սյունակներում թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով գրված են միևնույն՝ <<բժշկական այլ նյութեր>> բառերը (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-2):

Հրավերի Հավելված թիվ 4՝ <<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>>-ի Հավելված թիվ 1՝ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ում՝ հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով <<անվանումը և ապրանքային նշանը>> սյունակներում գրված են կոնկրետ արտադրողների կոնկրետ ֆիրմային՝ բրենդային անվանումները (կից փաստաթուղթ թիվ 3), սակայն ոչ այդ սյունակներում և ոչ էլ որևէ այլ տեղ չի պահպանվել նման դեպքերում <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը՝ << 5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:>> , ոչ մի տեղ առկա չեն «կամ համարժեք» բառերը:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի <<Էջմիածին Բժշկական Կենտրոն >> ՓԲԸ -ի կողմից՝ «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարությունը և «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2019թ. փետրվարի 11-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ << Քիմիական նյութերի >> ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերը՝ հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով, և դիմելով ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին խնդրում է՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխելու «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը:

Գրանցման թիվ 6425-19

18 02 19

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ <<Էջմիածին Բժշկական Կենտրոն >> ՓԲԸ-ի կողմից «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը՝ հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով, հակասում է <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 4 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սմբատ Բալասանյան

18 փետրվարի 2019թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45